# ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**Ինստիտուտի տնօրեն՝** *Սիմոնյան Արամ Հրաչիկի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

## *Ինստիտուտի աշխատակիցների կազմը*

1. Բայրամյան Հրաչիկ Սմբատի, բան. գիտ. թեկնածու, կենտրոնի տնօրեն
2. Հովհաննիսյան Մհեր Սուրենի, պատմ. գիտ. թեկնածու, բաժնի վարիչ
3. Բաբայան Էմմա Հարությունի, կրտսեր գիտաշխատող
4. Եսայան Ջուլիետա Հրաչի, կրտսեր գիտաշխատող
5. Թամարյան Ջեննի Լավրենտիի, կրտսեր գիտաշխատող
6. Կոնդակչյան Կատարինա Ասատուրի, կրտսեր գիտաշխատող
7. Հովհաննիսյան Լիլիա Հայկազի, կրտսեր գիտաշխատող
8. Հովհաննիսյան Մերի Վազգենի, կրտսեր գիտաշխատող
9. Մակարյան Էվելինա Անդրանիկի, կրտսեր գիտաշխատող
10. Մինասյան Մարինե Պետիկի, կրտսեր գիտաշխատող
11. Միրզոյան Սերգեյ Սամվելի, կրտսեր գիտաշխատող
12. Պողոսյան Էմիլ Էդուարդի, կրտսեր գիտաշխատող
13. Սարգսյան Վարդուհի Ֆելիքսի, կրտսեր գիտաշխատող
14. Հարությունյան Ռուզաննա Վասպուրականի, պատմ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
15. Մխիթարյան Վարդան Գառնիկի, գիտաշխատող

## *Ուսումնաօժանդակ աշխատակիցներ*

1. Աղաջանյան Թագուհի Կամոյի, ավագ լաբորանտ
2. Մանուկյան Վարդուհի Վարազդատի, ավագ լաբորանտ
3. Ավետիսյան Նատալիա Հայկի, լաբորանտ
4. Վրթանեսովա Տատյանա Վլադիմիրի, լաբորանտ

## *Համատեղողներ*

1. Սիմոնյան Հրաչիկ Ռուբենի, պատմ. գիտ. դոկտոր, գլխավոր գիտաշխատող
2. Սիմոնյան Արամ Հրաչիկի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Հարությունյան Բաբկեն Հարությունի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, լաբորատորիայի ղեկավար
4. Ավետիսյան Հայկ Գրիգորի, պատմ. գիտ. դոկտոր, լաբորատորիայի ղեկավար
5. Սահակյան Լուսինե Սուրենի, բան. գիտ. թեկնածու, բաժնի վարիչ
6. Գրիգորյան Վարդան Սուրենի, բան. գիտ. թեկնածու, փոխտնօրեն
7. Ղարիբյան Ալիկ Ավետիքի, պատմ. գիտ. թեկնածու, գիտքարտուղար
8. Հայրունի Աշոտ Նորայրի, պատմ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող

9. Հովհաննիսյան Հայկազ Ժորայի, պատմ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
10. Մաղալյան Վլադիմիր Սարգիսի, պատմ. գիտ. թեկնածու, առաջատար գիտաշխատող
11. Ափցիաուրի Նինո Կոնստանտինի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
12. Գնունի Արտակ Վարդգեսի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
13. Դանիելյան Էդուարդ Գալուստի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
14. Հայրապետյան Կարեն Պավելի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
15. Հովհաննիսյան Վահան Էդուարդի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
16. Հովսեփյան Յուրիկ Լենդրուշի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
17. Սաֆարյան Ալեքսանդր Վիգենի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
18. Տեր-Մարտիրոսով Ֆելիքս Իվանի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
19. Բաղալյան Գեղամ Միհրանի, կրտսեր գիտաշխատող
20. Գասպարյան Բորիս Զարեհի, կրտսեր գիտաշխատող
21. Ղամբարյան Գոհար Սերգեյի, ասպիրանտ, կրտսեր գիտաշխատող
22. Մալքոնյան Անդրանիկ Արթինեի, կրտսեր գիտաշխատող
23. Ավետիսյան Սուրեն Ռուբիկի, պատմ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
24. Գրիգորյան Հովիկ Բաբկենի, գիտաշխատող

## *Ուսումնաօժանդակ աշխատակիցներ*

1. Ապիկյան Տիգրան Ժիրայրի, ավագ ինժեներ
2. Աղուզումցյան Աննա Խաչատուրի, ավագ լաբորանտ
3. Դերձյան Վահանդուխտ Վահանի, ավագ լաբորանտ
4. Բաղդասարյան Լիլիա Ռոբերտի, լաբորանտ
5. Գևորգյան Էդգար Արթուրի, լաբորանտ
6. Եղիազարյան Կարինե Ալբերտի, լաբորանտ
7. Սարգսյան Անի Համլետի, լաբորանտ

## *Ինստիտուտի գործունեության ուղղությունները*

Նորաստեղծ ինստիտուտի առջև խնդիր է դրված հետազոտությունների հիմնական առանցքը դարձնել հետևյալ ուղղությունները.

- Հայ ազգային ինքնության խնդրի, հայ ժողովրդի հոգեկերտվածքի և հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրություն (Հայ ինքնության բաժին),
- Հայ հնագիտություն (Հնագիտական հետազոտությունների լաբորատորիա),
- Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, պատմագրություն և մատենագիտություն (Ցեղասպանագիտության բաժին),
- Հայ-օսմանական առնչություններ (Հայ-օսմանական առնչությունների բաժին),
- Հայ-վրացական կապերը (Վրացագիտության հայկական կենտրոն),
- Հայագիտական, պատմագիտական և աղբյուրագիտական ժառանգության ուսումնասիրություն (Աղբյուրագիտական լաբորատորիա),
- Արևմտահայ և արևելահայ լեզվական առնչությունների ուսումնասիրություն (Հայոց լեզվի ուսումնասիրության բաժին),
- Սփյուռքի տնտեսական, գիտական և մշակութային ներուժի ուսումնասիրություն, հայրենիք-սփյուռք կապերի հետազոտություն (Սփյուռքագիտության բաժին),

- Վիրտուալ (էլեկտրոնային-համացանցային) հայագիտություն (Վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժին):

## *Ինստիտուտի գործունեության հիմնական նպատակները*

1991 թ. Հայաստանի անկախության ձեռքբերումից ի վեր հայագիտության առջև ծառացան նոր խնդիրներ: Ազգային պետականության կերտման ճանապարհին հայության համար կենսական նշանակություն ունի այնպիսի հարցերի լուծումը, ինչպիսիք են՝ ազգային ինքնության պահպանումը, հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունների նորովի արժևորումը, ազգային և համապետական այլ հիմնախնդիրներ:

Վերջին տարիներին օրակարգային դարձած ազգային պետական մի շարք կարևոր հիմնահարցեր՝ հայ-թուրքական հարաբերությունները, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորումը և այլն, պահանջում են նոր մոտեցումներ և նոր արժևորում: Ըստ այդմ՝ հայագիտությունն այսօր դարձել է ազգային հասարակական կյանքի, անվտանգության ապահովման կարևորագույն գործոն, ավելին՝ հայագիտության զարգացման նկատմամբ օրավուր աճող հետաքրքրությունը թե՛ Սփյուռքում, թե՛ մայր հայրենիքում հաստատում է վերջինիս՝ ազգային կենսագործունեության առաջնահերթ ուղղություններից մեկը լինելը, որը նպատակաուղղված է մեր պետության կայացմանն ու հզորացմանը:

ԵՊՀ ՀՀԻ-ի գիտական հետազոտությունների կարևորագույն գերակայություններից են նաև Հայաստանում արդիական այնպիսի ուղղությունների զարգացումը, ինչպիսիք են՝ հայագիտության բնագավառում տեղեկատվական անվտանգությունը, քաղաքական հայագիտությունը և այլն:

Հասունացել է սերտ գործնական կապեր հաստատելու անհրաժեշտությունը ինչպես արտերկրում գործող ճանաչված հայագիտական կենտրոնների և ճանաչված հայագետների հետ, այնպես էլ պատմագիտական և քաղաքական հիմնախնդիրներով զբաղվող խոշոր գիտական կենտրոնների հետ, ինչը հնարավորություն կտա կտրուկ բարձրացնել հայագիտական հետազոտությունների մեթոդական, մեթոդաբանական և տեսական մակարդակը: Այդպիսի կապերի հաստատումը կարևոր է նաև այն առումով, որ ներկայումս աշխարհի հայագիտական տարբեր կենտրոններ հայագիտության հիմնարար սկզբունքներում դրսևորում են որոշ մոտեցումներ, որոնք շատ դեպքերում թույլ չեն տալիս ազգային-պետական առանցքային խնդիրների հարցում ձևավորել գործունեության միասնական հայեցակարգ:

# ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

**Լաբորատորիայի վարիչ՝** *Ղարիբյան Ալիկ Ավետիքի, պատմ. գիտ. թեկնածու*

## *Լաբորատորիայի գործունեության ուղղությունները*

Լաբորատորիայի աշխատակիցները հետազոտական աշխատանքներ են կատարում Հայաստանի և հայերի վերաբերյալ ռուսական աղբյուրագիտական և պատմագիտական ժառանգության ուղղությամբ: Հետազոտական աշխատանքների մեկ առանձին ուղղություն է կազմում Հայոց ցեղասպանության վերաբերյալ աղբյուրագիտական նյութերի հավաքագրումը: 2009 թ-ին Ա. Սիմոնյանի խմբագրությամբ հրատարակվել է «Армянский вопрос, Геноцид армян» մատենագիտական ժողովածուն (Ереван, 2009, Издательство ЕГУ): Այժմ նյութեր են հավաքվում Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի պատմության վերաբերյալ:

## *Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում*

2008-2009 ուսումնական տարում լաբորատորիայի աշխատակիցների կողմից հետազոտություններ են կատարվել հայագիտական հետևյալ ուղղություններով՝

- ռուսական պատմական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին,
- Հայոց ցեղասպանությանը վերաբերող վավերագրերի հավաքում,
- հայ ազատագրական պայքարի՝ Ղարաբաղի և Զանգեզուրի տարածաշրջանին վերաբերող նյութերի բազայի ստեղծում:

## ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

**Լաբորատորիայի վարիչ՝** *Ավետիսյան Հայկ Գրիգորի, պատմ. գիտ. դոկտոր*

## *Լաբորատորիայի գործունեության ուղղությունները*

Լաբորատորիան կատարում է ծրագիր «Հնագիտական հետազոտություններ Հայաստանում, Քարի դարից-Միջնադար (Մարդու կողմից բնական ռեսուրսների օգտագործման գործընթացի հետազոտումը)» թեմայի սահմաններում: Նեղ իմաստով առաջարկվող ծրագիրը ընդգրկում է Հայաստանի Հանրապետության, լայն իմաստով՝ Հայկական լեռնաշխարհի տարածքը: Ըստ այդմ՝ ներկայացվելու են նախ և առաջ այս տարածաշրջանի աշխարհագրական և բնակլիմայական պայմանները, պատմամշակութային ենթագոտիները: Ժամանակագրական տեսանկյունից առանձնացվելու են քարի դարի, պղնձի, բրոնզի դարերի, վաղ երկաթի և Ուրարտուի, վաղ հայկական-անտիկ, միջնադարի շրջափուլերը, որոնք ուսումնասիրվելու են առանձին աշխատանքային խմբերի կողմից: Յուրաքանչյուր խումբ կենտրոնանալու է կոնկրետ հուշարձանի/հուշարձանախմբի նյութի վրա: Կատարվելու են տվյալ հուշարձանին վերաբերող միջդիսցիպլինար ուսումնասիրություններ: Ուսումնասիրությունների արդյունքները դիտարկվելու են միասին, նույն համատեքստում համընդհանուր տիպի եզրակացությունների համար: Նախագծի կատարման հետևանքով ստացված արդյունքները իրենցից կներկայացնեն ինչպես կոնկրետ գիտական, այնպես էլ դիդակտիկ արժեք: Նախատեսվող արդյունքները կարող են լինել՝ հնագիտական պեղումների կազմակերպում Հայաստանում, հայտնաբերված նոր հնագիտական հուշարձանների ուսումնասիրություններ, նյութի վերականգնում և կոնսերվացում, ֆիզիկա-քիմիական դիագնոստիկա, մարդու կողմից բնական ռեսուրսների օգտագործման գործընթացներին առնչվող տվյալների բազայի ստեղծում և բազմաբնույթ քարտեզների կազմում, օրինաչափությունների բացահայտում և վերլուծություն, հնագիտական հուշարձանների պարբերացմանը և ժամանակագրությանը առնչվող հարցերի ճշգրտում, մշակված նյութի հրատարակում տեղական և արտասահմանյան պարբերականներում, համալսարանի թանգարանային ֆոնդի համալրում, ձեռք բերված տվյալների օգտագործում դիդակտիկ նպատակներով՝ հնագիտության դասավանդման մեթոդների կատարելագործման համար:

## *Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում*

- Պեղումներ են կատարվել Արամուսի ուրարտական ամրոցի տարածքում:
- Ուսումնասիրվել են Կոտայքի մարզի մի շարք հանգուցային հուշարձաններ, այդ թվում՝ Կամարիս ամրոցը:

- Շարունակվել են հետազոտությունները Էրեբունիում և հարակից բնակավայրում:
- Անցկացվել են պեղումներ Երվանդաշատում:
- Ուսումնասիրվել են Հատիս լեռան վանակատե հումքի աղբյուրները և դրանց՝ Կոտայքի սարահարթի և հարակից տարածքների քարի դարի բնակչության կողմից օգտագործման օրինաչափությունների բացահայտման խնդիրները:
- Կատարվել են ուսումնասիրություններ՝ ուղղված Հայաստանի ուշ էնեոլիթյան խեցեղենի տեխնիկո-տեխնոլոգիական առանձնահատկությունների բացահայտմանը:
- Կատարվել են պեղումներ Վայոց ձորի Արենի գյուղի մերձակայքում գտնվող քարայրում:
- Քարաշամբի ուշ-բրոնզ վաղ երկաթեդարյան համալիրների ուսումնասիրության շրջանակներում համակարգվել և տիպաբանության են ենթարկվել նախկին պեղումներից հայտնաբերված նյութերը:
- Հետազոտություններ են կատարվել ուրարտական մետաղագործության ուղղությամբ:
- Ուսումնասիրվել է Սևանի թերակղզու տարածքը, մասնավորապես Վազգենյան դպրանոցի հարակից մասը:
- Մայր տաճարի տարածքից հավաքվել և համակարգվել է վերգետնյա խեցեղեն նյութը:
- Կատարվել են ուսումնասիրություններ Քաշաթաղի շրջանի Աղավնո ժ1 բնակավայրում:
- Հաստատագրվել են Էջմիածին-Շահումյան-Նորակերտ գծում տեղակայված հնագիտական հուշարձանները:
- Հուշարձանների հետազոտությունների արդյունքում տպագրվել է 27 հրապարակում:

## ՎՐԱՑԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**Գիտական ղեկավար՝** *Բայրամյան Հրաչիկ Սմբատի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ*

### *Կենտրոնի գործունեության ուղղությունները*

Վրացագիտության կենտրոնի աշխատանքները ընթանում են մասնագիտական երկու ուղղությամբ՝ **գիտամանկավարժական** («Վրացագիտություն» մասնագիտացում խմբերում վրացագիտական առարկաների դասավանդում) և **գիտահետազոտական:**

### *Կենտրոնի գործունեության հիմնական նպատակները*

- ուսումնասիրել Վրաստանի պատմությունը, գրականությունը, լեզուն ու մշակույթը,

- ստեղծել համապատասխան ծրագրեր, ուսումնական անհրաժեշտ դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, բառարաններ, զրուցարաններ, ինքնուսույցներ,

- պատրաստել հայ վրացագետ կադրեր՝ գիտության, մանկավարժության ոլորտներում, պետական ապարատում, դիվանագիտության, թարգմանության, իրավաբանության և այլ բնագավառներում աշխատելու համար,

- ծրագրել և անցկացնել գիտական սեմինարներ, կոնֆերանսներ,

- ուսումնասիրել, թարգմանել և հրատարակության պատրաստել վրացալեզու հայագիտական արժեքավոր աշխատությունները,

- նպաստել գիտակրթական կապերի սերտացմանը Երևանի և Թբիլիսիի պետական համալսարանների միջև:

**<u>Գիտական աշխատանքները</u>** նվիրված են վրաց գրականության պատմության, հայ-վրաց լեզվական-բառարանագրական առնչությունների, հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն թարգմանությունների,

հայ-վրաց գրական-մշակութային կապերի, վրացի և վրացացած հայազգեստների, հայագիտական աշխատությունների ուսումնասիրությանը, դրանցից կարևորագույնների հայերեն թարգմանությանն ու հրատարակության պատրաստմանը:

## Գիտահետազոտական ուղղություններ

| Ուղղության անվանումը | Ղեկավար |
|---|---|
| 1. Վրաց լեզու. հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն: (Պետական ֆինանսավորում): | Բայրամյան Հ. Ս. |
| 2. Ջավախքը հայ և վրաց գրականության և քաղաքականության մեջ. պատմություն և արդիականություն: (Պետական ֆինանսավորում): | Ափցիաուրի Ն. Կ. |
| 3. Վրաց լեզու. շարահյուսություն: (Պետական ֆինանսավորում): | Բայրամյան Հ. Ս. |

## Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

***Թեմա 1.*** Վրաց քերականության բուհական դասագիրքը տեսական և գիտագործնական նշանակություն ունի ԵՊՀ հումանիտար ֆակուլտետների ուսանողների, Վրաստանի հայկական դպրոցների, հայերենի ու վրացերենի աղերսներն ուսումնասիրողների, հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն թարգմանություններ կատարողների համար: Աշխատանքը շարունակվում է և նախատեսված է ավարտել 2010 թ.:

Գիտահետազոտական և մանկավարժական աշխատանքներին զուգահեռ՝ Հ. Բայրամյանը մամուլում տպագրել է լրագրային հոդվածներ՝ նվիրված ականավոր գրողների ու գիտնականների հոբելյաններին, ղեկավարում է ՈՒԳԸ զեկուցումներ, բակալավրական և մագիստրական ավարտաճառեր, կատարում է վրաց դասական և ժամանակակից գեղարվեստական գրականության թարգմանություններ, որոնք լույս են տեսնում գրական հանդեսներում և առանձին գրքերով:

***Թեմա 2.*** Հաշվետու ժամանակաշրջանում ավագ գիտաշխատող Նինո Ափցիաուրին շարունակել է եռամյա (2008-2010) պլանով նախատեսված իր ստանձնած թեման՝ «Ջավախքը հայ և վրաց գրականության և քաղաքականության մեջ. պատմություն և արդիականություն»: Նա հավաքել, թարգմանել և վերլուծել է Ջավախքին առնչվող հին, նոր և նորագույն շրջանի գրավոր տեղեկությունները: Ուսումնասիրել է Հայաստանի կառավարող և ընդդիմադիր կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, անհատ քաղաքագետների՝ Ջավախքի խնդրին վերաբերող նյութերը:

***Թեմա 3.*** Կրտսեր գիտաշխատող Զ. Թամարյանը ուսումնասիրել է վրաց և հայ գիտական, գեղարվեստական և գիտահանրամատչելի գրականությունը, հավաքագրել, թարգմանել և խմբավորել է թեմային առնչվող տեսական և մեթոդական անհրաժեշտ նյութերը: Թեմայի ուսումնասիրությունը նախատեսվում է ավարտել 2010 թ.: Կենտրոնի աշխատակիցները ուշի-ուշով հետևում են վրացալեզու պարբերական մամուլին, որտեղ հաճախակի են տպագրվում հայ-վրաց պատմամշակութային առնչություններին վերաբերող վիճահարույց հոդվածներ: Դրանք թարգմանվում և տրամադրվում են պատկան մարմիններին և համապատասխան բնագավառների մասնագետներին՝ արձագանքելու և իրենց խոսքն ասելու դրանց մասին: Նշվածից բացի՝ անցկացվում են տարաբնույթ միջոցառումներ՝ նվիրված հայ-վրացական գրական-մշակութային կապերին, հոբելյանական տարեթվերին:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

**Գիտական ղեկավար՝** *Հարությունյան Բաբկեն Հարությունի, ԳԱԱ թղթակից անդամ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

## *Լաբորատորիայի գործունեության ուղղությունները*

Լաբորատորիան զբաղվում է Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության խնդիրների քննությամբ, որը հայագիտության համար ունի թե՛ գիտական և թե՛ կարևոր արդիական նշանակություն:

## *Գիտական թեմաներ*

| Թեմայի անվանումը | Ղեկավար |
|---|---|
| 1. Հայաստանի Հանրապետության ատլաս (1918-20 թթ.): (Պետական ֆինանսավորում): | Հարությունյան Բ. Հ. |

## *Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում*

***Թեմա 1.*** Ներկայումս լաբորատորիայի աշխատակիցներն առաջին հերթին աշխատանքներ են տանում Հայաստանի առաջին հանրապետության պատմական ատլաս ստեղծելու ուղղությամբ, որի նշանակությունը մեծ է մեր նորանկախ պետության համար: Զանազան բնույթի նյութեր են հավաքվում ՀՀ արխիվներում՝ ատլասի տարբեր քարտեզները կազմելու համար: Լաբորատորիայի ջանքերով արժեքավոր նյութեր են բերվել նաև արտերկրից: Պատրաստված են 3 տասնյակի չափ քարտեզներ, իսկ մյուսները գտնվում են պատրաստման գործընթացում:

***2009 թվականին պատրաստվել են ներքոհիշյալ քարտեզները.***

- Չհայտարարված պատերազմ հայ-ադրբեջանական սահմանին
- Լեռնային Ղարաբաղի ինքնավար շրջանը 1918-1920 թթ.
- Մշակութային կյանքը ՀՀ-ում 1918-1920 թթ.
- ՀՀ տնտեսության զարգացման ծրագրերը
- ՀՀ-ի սահմանների նախագծերը Փարիզի խաղաղության կոնֆերանսում
- ՀՀ ազգաբնակչության քարտեզ
- Կարսի մարզի յուրացման ծրագրերը և իրականացման առաջին քայլերը
- Հայ-վրացական սահմանային բանակցությունները
- ՀՀ սահմանների խնդիրը հայ-ռուսական պայմանագրերում
- ՀՀ կրթական համակարգը

Ներկայումս և 2010 թ. կիրականացվեն ատլասի պատրաստման ամփոփիչ աշխատանքները:

Լաբորատորիայում նշանակալից աշխատանք է կատարվում կադրերի պատրաստման ուղղությամբ: Լաբորատորիայի նախկին աշխատակից Ա. Եղիազարյանը ավարտել է իր «Արմինիա ոստիկանությունը (պատմա-աշխարհագրական ուսումնասիրություն)» դոկտորական ատենախոսությունը, իսկ Կ. Հայրապետյանը շարունակում է աշխատել իր «Գաղթականության խնդիրը Հայաստանի առաջին

հանրապետությունում», Ռ. Հարությունյանը՝ «Հայկական մարզպանությունը V-VII դարերում (պատմա-աշխարհագրական ուսումնասիրություն)», Վ. Մխիթարյանը՝ «Հայաստանի և Անդրկովկասի ֆրանսիական քարտեզագրությունը» թեմաների ուղղությամբ:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բ. Հարությունյանը՝ որպես պատասխանատու խմբագիր, խմբագրել է «Հայաստանի Ազգային ատլաս»-ի Բ հատորը:

## ՀԱՅ-ՕՍՄԱՆՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

**Բաժնի վարիչ՝** *Սահակյան Լուսինե Սուրենի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ*

### *Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում*

2008-2009 ուստարում բաժինն իրականացրել է գիտական աշխատանքներ հետևյալ ուղղություններով՝

1. Քննության են ենթարկվել Օսմանյան կայսրության վարչական բաժանումների յուրահատկությունները Տրապիզոնի նահանգի օրինակով:

2. Ուսումնասիրվել են Օսմանյան կայսրությունում և հանրապետական Թուրքիայում տեղանունների թուրքացման քաղաքականության իրականացման մեթոդները և նպատակները, առաջին անգամ հայերեն թարգմանվել և հրատարակվել է Օսմանյան կայսրության ռազմական նախարար Էնվեր փաշայի՝ «ոչ մահմեդական» տեղանունների թուրքացման մասին հրամանագիրը:

3. Հիմք ընդունելով 16-րդ դարի օսմանյան աշխարհագիր մատյանների գրանցումները՝ շարունակվել է քննության ենթարկվել Օսմանյան կայսրության հարկային քաղաքականությունը Բաբերդ, Սպեր, Դերջան, Կամախ, Խարբերդ, ինչպես նաև հարակից Համշեն գավառներում:

4. Առանձին ուսումնասիրության նյութ է դարձել Տրապիզոնի նահանգի ժողովրդագրությունը 16-19-րդ դարերի կտրվածքով:

5. Ավարտման փուլում է գտնվում թյուրքականության (Türkçülük) գաղափարախոս Զիա Գյոքալփի քաղաքական և մշակութաբանական հայացքների քննությունը:

6. Շարունակվել են աշխատանքները օսմաներենի դասագրքի ստեղծման ուղղությամբ:

7. Հրատարակության է պատրաստ «Օսմանագիտական տարեգիրք» հոդվածների ժողովածուն:

8. Հիմք ընդունելով 16-րդ դարի օսմանյան աշխարհագիր մատյանների և 19-րդ դարի տարեգրքերի, ինչպես նաև այլ աղբյուրների փաստական նյութը՝ «*Օսմանյան աշխարհագիր մատյանների և տարեգրքերի առանձնահատկությունները ու թեմատիկ ընդգրկումները» թեմայի* շրջանակում քննության են ենթարկվել Տրապիզոնի նահանգում Օսմանյան կայսրության վարած վարչական, հարկային կրոնական քաղաքականությունը, ժողովրդագրական վիճակն ու տեղաշարժերը: Այս աղբյուրները արժեքավոր նյութ են մատուցում նաև Տրապիզոնի հայաբնակ գավառների ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական իրավիճակն ուսումնասիրելու համար: (Թեմայի իրականացնող՝ Լ. Սահակյան):

9. *«Թյուրքականությունը (Türkçülük) և թյուրքական մշակույթը»* թեմայի շրջանակում ուսումնասիրվել են թյուրքականության *(Türkçülük)* գաղափարախոս Զիա Գյոքալփի քաղաքական, մշակութաբանական, տնտեսագիտական հայացքները: (Թեմայի իրականացնող՝ Ալ. Սաֆարյան):

10. Շարունակվել են աշխատանքները հայ ուսանողների համար «Օսմաներենի դասագրքի» ստեղծման ուղղությամբ, համակարգվում են համապատասխան նյութերն ու տեքստերը: (Թեմայի իրականացնողներ՝ Լ. Սահակյան, Ալ. Սաֆարյան, Ա. Սարգսյան):

# ՎԻՐՏՈՒԱԼ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

**Բաժնի վարիչ՝** *Հովհաննիսյան Մհեր Սուրենի, պատմ. գիտ. թեկնածու*

## *Բաժնի գործունեության հիմնական նպատակները*

Այսօր պատմագիտական ուսումնասիրությունների աղբյուրագիտական և տեղեկատվական շտեմարանի դերը հետզհետե ստանձնում է համացանցը՝ ինտերնետը, որի առաջադրած խնդիրները հայագիտության համար նոր մարտահրավերներ կարելի է համարել: Այս տրամաբանությունից էլ ելնելով՝ Երևանի պետական համալսարանի Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կազմում ստեղծվել է Վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժինը: Այն հնարավորինս ապահովելու է համացանցի կայքէջերում զետեղված հայագիտական, հակահայագիտական նյութերի վերհանումը, վերլուծությունը, համակարգումը և հասցեագրումը:

## *Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում*

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում մշակվել, տեղադրվել է ՀՀԻ պաշտոնական կայքէջը՝ www.armin.am, որը և սպասարկվում է բաժնի կողմից: Մշակման մեջ է գտնվում համացանցում առկա հակահայկական՝ թուրքական և ադրբեջանական, շուրջ 35 կայքէջ, որոնց վերաբերյալ հրատարակման է պատրաստվում տեղեկատու գրքույկ: Աշխատանքներ են տարվում համացանցում առկա պատմագիտական բնույթի կայքէջերի վերհանման և մշակման ուղղությամբ:

***Հայագիտական հետազոտությունների ինստիտուտում 2008-2009 հաշվետու տարում կատարվել են նաև հայոց լեզվի և գրականության տարբեր ոլորտներին վերաբերող հետազոտություններ: Հայագիտության տարբեր ոլորտների համաչափ և ներդաշնակ զարգացման առումով ինստիտուտի աշխատանքների կազմակերպման ընթացքում ապահովվել է հայոց լեզուն ուսումնասիրող թեմատիկ հետազոտական խմբերի կապը ՀՀԻ-ի մյուս ստորաբաժանումների հետ: Աշխատանքների կատարումը վերահսկվել է Հայոց լեզվի ուսումնասիրության բաժնի կողմից:***

## *Գիտական թեմաներ*

| Թեմայի անվանումը | Ղեկավար |
|---|---|
| 1. Հայաստանի պատմական և արդի տեղանունների բառարան: (Պետական ֆինանսավորում): | Բարսեղյան Հ. Խ. |
| 2. Վաղ միջնադարյան գեղարվեստական արձակի ժանրային համակարգը (5-9-րդ դարեր): (Պետական ֆինանսավորում): | Մադոյան Ա. Գ. |
| 3. Բառագործածական և քերականական կարծրատիպային շեղումները գրական հայերենից զանգվածային լրատվական միջոցների լեզվում: (Պետական ֆինանսավորում): | Գևորգյան Կ. Հ. |

## Հայոց լեզվի եւ գրականության ուղղությամբ ինստիտուտում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

***Թեմա 1.*** 2009 թվականին ավարտվել է բառարանի հինգհատորյակի համառոտագրում-վերախմբագրումը, ինչպես նաև կատարվել են պահանջվող նոր տվյալների մասնակի լրացում-ճշգրտումներ: Ավարտվել է այս ամենի համակարգչային մուտքագրումը:

Բառարանի 1-3 հատորները մինչև այս տարվա վերջը նախատեսված է ուղարկել հրատարակչություն:

***Թեմա 2.*** Աշխատակիցներն ավարտել են նյութերի դասակարգումը: Բ.գ.թ. Ա. Մադոյանը պ.գ.թ. Պ. Հովհաննիսյանի հետ համատեղ կազմել և հրատարակության է պատրաստել Ուխտանես Եպիսկոպոսի «Պատմութիւնը», որը հանձնված է տպագրության: «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի այս տարվա 3-րդ համարում լույս կտեսնի բ.գ.թ. Հ. Ալվրցյանի՝ «Հայ հին և միջնադարյան բանաստեղծության գաղափարական-աշխարհայացքային հիմքերը» վերտառությամբ հոդվածը: Մայր աթոռ Սբ. Էջմիածնի հրատարակչությունը լույս է ընծայել «Վարք սրբոց» ժողովածուի Ա և Բ հատորները, որ գրաբարից աշխարհաբարի է վերածել բ.գ.դ. Ա. Մադոյանը: Վերջինս աշխարհաբարի է վերածել նաև «Պապիկ և թոռնիկ» գիրքը, որ ևս հրատարակել է Էջմիածնի տպարանը: Թեհրանում լույս է ընծայվել Ա. Մադոյանի «Խորհուրդ մեծ և սքանչելի. Հայ մատենագրութիւն բոլորի համար» մենագրությունը:

***Թեմա 3.*** 2009 թ. գրվել են աշխատության հերթական չորս գլուխները՝ նվիրված օտարաբանություններին:

### 2008-2009 ուստարում հրատարակվել են

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| 3 | 5 | - | - | 27 | 4 |

### Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

#### Դասագիրք

1. *Ավետիսյան Հ., Մելքոնյան Ա., Մովսիսյան Ա., Հովհաննիսյան Պ., Դանիելյան Է.* (գլխավոր խմբագիրներ՝ *Սիմոնյան Ա., Մելքոնյան Ա.*), Հայոց պատմություն, հումանիտար հոսք, 10-րդ դասարան, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2009, 254 էջ:
2. *Ավետիսյան Հ., Մելքոնյան Ա., Մովսիսյան Ա., Հովհաննիսյան Պ., Դանիելյան Է., Բարխուդարյան Վ., Հարությունյան Գ., Չոպանյան Պ.* (գլխավոր խմբագիրներ՝ *Սիմոնյան Ա., Մելքոնյան Ա.*), Հայոց պատմություն, ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսք, 10-րդ դասարան, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2009, 239 էջ: 0
3. *Ափցիաուրի Ն. Կ.* (համահեղինակ), Վրաց լեզվի դասագիրք, Վրաստանի հայկական դպրոցների 5-րդ դասարանի համար, «Ինտելեքտի» («Ինտելեկտ») հրատ., Թբիլիսի, 2008, 153 էջ:

#### Մենագրություն

1. *Սիմոնյան Հ.,* Ազատագրական պայքարի ուղիներում, Գիրք III, ԵՊՀ հրատ., Երևան, 2009, 1028 էջ:
2. *Սիմոնյան Հ.,* Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ., ապրիլ), ԵՊՀ հրատ., Երևան, 2009, 529 էջ:
3. *Симонян А. Г., Бабаян Э.,* Армянский вопрос, Геноцид армян, изд.-во ЕГУ, Ереван, 2009, 280 с.

4. *Վարդանյան Ս. Գ.,* Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), ԵՊՀ հրատ., Երևան, 2009, 427 էջ:
5. *Կյուրեղյան Երվանդ,* Իմ հուշերի ճանապարհով (Եղեռնի վերապրողի վկայություններ), հրատարակության պատրաստեցին, ծանոթագրեցին Ս. Վարդանյանը, Լ. Սահակյանը, քարտեզների հեղինակ՝ Գ. Բադալյան, Երևան, «Լուսակն» հրատ., 2009, 350 էջ:

## Յոդված

1. *Симонян А. Г.,* О состоянии и перспективах развития Ереванского государственного университета, Об образовании, Евразийское пространство, изд.-во МГУ, Москва, 2009, с. 337-342.
2. *Բայրամյան Հ. Ս.,* Նոդար Դումբաձե. դիմանկարի ուրվագիծ (ծննդյան 80-ամյակի առթիվ), «Կամուրջ»-2008 (Վրաստանի հայ գրողների ստեղծագործական միության տարեգիրք), «Էրովնուլի մծերլոբա» («Ազգային գրականություն») հրատ., Թբիլիսի, 2008, էջ 246-253:
3. *Բայրամյան Հ. Ս.,* Բենիկ Սեյրանյան. մարդը, գրողը (ծննդյան 95-ամյակի առթիվ), «Կամուրջ»-2008 (Վրաստանի գրողների ստեղծագործական միության տարեգիրք), «Էրովնուլի մծերլոբա» («Ազգային գրականություն») հրատ., Թբիլիսի, 2008, էջ 261-263:
4. *Ափցիաուրի Ն. Կ.,* Բազմալեզու կրթությունը Վրաստանում, «Բազմալեզու կրթություն» եռամյա հանդես, թիվ 4, Թբիլիսի, 2008, էջ13-14 (վրաց.):
5. *Ափցիաուրի Ն. Կ.,* Թինա Ասաթիանի՝ Հայաստանի վրաց տիկինը (ծննդյան 90-ամյակի առթիվ), Հորեկյանական ժողովածու, ՀՀ ԳԱԱ ակադեմիայի հրատ., 2008, էջ 19-20:
6. *Ավետիսյան Հ., Ավետիսյան Ն.,* Վանի թագավորության մարտակառքերի հարցի շուրջ, Հայ Աստվածաբան, Բ, Երևան, 2008, էջ 249-256:
7. *Ավետիսյան Հ., Ավետիսյան Ն.,* Վանի թագավորության մետաղագործությունը (աշխատանքային գործիքներ, զենքեր), Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, Գ, Երևան, 2008, էջ 365-378:
8. *Avetisyan H.,* Wilfrid Allinger-Csollich A Bronze Sculpture from Aramus Aramazd, Armenian journal of near eastern studies, volume III, issue I, Yerevan, 2008, p. 87- 90, 167, 182-183.
9. *Գնունի Ա., Խաչատրյան Գ., Միքայելյան Գ.,* Կերենի հյուսիսային բլրի պեղումները, Հին Հայաստանի մշակույթը, XIV, Երևան, 2008, էջ 181-186:
10. *Գնունի Ա., Խաչատրյան Գ.,* Հնագույն Կերենը, «Հուշարձան» տարեգիրք, Դ-Ե, Երևան, 2008, էջ 139-151:
11. *Ղարիբյան Ի., Հակոբյան Հ., Գնունի Ա., Խաչատրյան Գ., Վարթանեսովա Տ.,* Հնագույն Բջնին (նախնական դիտարկումներ), Պատմա-բանասիրական հանդես, h. 3, Երևան, 2008, էջ 185-196:
12. *Тер-Мартиросов Ф.,* Ритоны Эребуни, Տարեգիրք. Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա, Երևան, 2008, էջ 89-101:
13. *Тер-Мартиросов Ф.,* Ервандашат, Историко-филологический журнал, N 1, НАН РА, Ереван, 2008, с. 3-19.
14. *Ter-Martirosov F.,* L`Archeologie et l`Histoire de Armenie ancienne, 11-eme Conference Generale de l`Association Internatinale des Etudes Armeniennes, Sorbonne, Paris, 2008, p. 46-51.
15. *Тер-Мартиросов Ф.,* Раскопки в Эребуни в 2006, Հին Հայաստանի մշակույթը, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2008, էջ 169-173:
16. *Тер-Мартиросов Ф.,* Раскопки памятника Драсханакерт у села Бениамин в 2005-2006 гг., Հին Հայաստանի մշակույթը, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2008, էջ 201-204:
17. *Тер-Мартиросов Ф.,* Дворец в Ервандашате, Հին Հայաստանի մշակույթը, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2008, էջ 205-210:
18. *Тер-Мартиросов Ф.,* Раскопки крепости Эребуни, Հուշարձան տարեգիրք, Դ-Ե, Երևան, 2008, էջ 152-159:

19. Гаспарян Б., Габриелян И., Ройрон П., Зардарян Д., О находке ископаемых листьев *Platanus Sp.* в Южной Армении, Հին Հայաստանի մշակույթը XIV, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր՝ նվիրված Բ. Բ. Պիոտրովսկու և Հ. Մ. Ջանփոլադյանի հիշատակին, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2008, էջ 17-36:

20. *Gasparyan B., Balasescu A., Liagre J., Chataigner C.,* The fauna from Kalavan-1 (Upper Paleolithic-Epipaleolithic, Armenia), 9th Meeting of ASWA (Archaeozoology of South-West Asia and Adjacent Areas), International Council for Archaeozoology, Abu Dhaby, UIE, 2008, pp. 25-26.

21. *Gasparyan B., Pinhasi R., Wilkinson K., Bailey R., Bar-Oz G., Bruch A., Chataigner C., Hoffmann D., Hovsepyan R., Nahapetyan S., Pike A. W. G.,* Hovk-1 and the Middle and Upper Paleolithic of Armenia: a preliminary framework Journal of Human Evolution, volume 55, N 5, november, 2008, pp. 803-816.

22. *Գասպարյան Բ.,* Հայաստանի Հանրապետության քարեդարյան հուշարձանների ուսումնասիրության, պահպանության և օգտագործման հեռանկարները, Հայկական մշակութային ժառանգության պահպանությունը Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում, Երևան, 2008, էջ 147-150:

23. *Գասպարյան Բ., Պետրոսյան Ա., Փինհասի Ռ., Առաքելյան Դ., Գաբրիելյան Ի., Նահապետյան Ս.,* Քարեդարյան հուշարձանների ուսումնասիրությունն Աղստևի հովտում 2005-2008 թթ., Տավուշ, նյութական և հոգևոր ժառանգություն, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր՝ նվիրված Հնագիտության և ազգագրության ինստիտուտի 50-ամյակին, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2009, էջ 41-56:

24. *Գասպարյան Բ., Փինհասի Ռ., Նահապետյան Ս., Ղուկասյան Ռ.,* Միջին պալեոլիթյան նորահայտ հուշարձան Աղստևի հովտում (Հովք-1 քարայրի 2005-2008 թթ. ուսումնասիրության արդյունքները), Տավուշ, նյութական և հոգևոր ժառանգություն, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր՝ նվիրված Հնագիտության և ազգագրության ինստիտուտի 50-ամյակին, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2009, էջ 57-66:

25. *Gasparyan B., Liagre J., Arakelyan D., Nahapetyan S., Chataigner C.,* Mobilité des groupes préhistoriques et approvisionnement des matières premières à la fin du Paléolithique supérieur dans le Petit Caucase: données récentes sur le site de plein air de Kalavan 1 (nord du lac Sevan, Arménie) Djindjian F., Kozlowski J., Bicho N. (eds), *Le concept de territoires dans le Paléolithique supérieur européen-UISPP, Proceedings of the XV world congress (Lisbon, 4-9 september, 2006),* BAR International Series 1938, Oxford, ArchaeoPress, 2009, p. 75-84.

26. *Սահակյան Լ. Ս.,* Տրապիզոնի Օսմանյան կայսրության վարչական բաժանումներում, «Ձայն համշենական», N 11-12 (52-53), Երևան, 2008, էջ 1-2:

27. *Սահակյան Լ. Ս.,* Տրապիզոնի Օսմանյան կայսրության վարչական բաժանումներում, «Ձայն համշենական», N 1-2 (54-55), Երևան, 2009, էջ 1-2:

## Զեկուցումների թեզիս

1. *Ter-Martirosov F.,* Armenia in the period of joining the Achemenid empire, The First International Armenology and Iranology Conference, Isfagan University, Isfagan, 2008, p. 54-55.

2. *Gasparyan B., Gabrielyan I., Scharrer St., Bruch A.,* The Early Pleistocene Flora of the Darbas locality (Southern Armenia), Terra Nostra 2008/2, 12th International Palynological Congress (IPC-XII), 8th International Organisation of Palaeobotany Conference (IOPC-VIII), august 30-september 5, Abstract, 2008, Bonn, 2008, p. 85.

3. *Գասպարյան Բ., Խեչոյան Ա.,* Գեղարվեստական մտածելակերպի արտահայտման միջոցները ժայռարվեստում, Հայագիտական և իրանագիտական միջազգային առաջին գիտաժողով, Զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2008, էջ 98-101:

4. *Сафарян А. В.,* Л. Расони - об истории и культуре периода правления Сельджуков, "Литература и культура эпохи Сельджуков", Материалы международных научный конференции, (11-13 марта, 2009 г.), Национальный культурный центр Туркменистана "Мирас", Выший свет по науке и

технике при Призиденте Туркменистана, Ашхабад-2009, с. 355-356 (նույնը՝ թուրքմեներեն՝ էջ 91, անգլերեն՝ էջ 216):

## Քարտեզ

*Գասպարյան Բ.*, Հայկական լեռնաշխարհի միջնաքարի (մեզոլիթ), նորաքարի (նեոլիթ) և պղնձաքարի (էնեոլիթ) մշակույթները, քարտեզ, Մ 1: 3 700 000 Հայաստանի Ազգային ատլաս, Հատոր Բ, «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ, Երևան, 2008, 12 էջ:

1. *Հարությունյան Բ.*, քարտեզագիր՝ Վ. Մխիթարյան, «Հայաստանի պատմության ատլաս», Բ մաս, Երևան, 2008, 104 էջ:
2. *Հարությունյան Բ.*, «Հայաստանի Ազգային ատլաս», Բ մաս, Երևան, 2008:
   - Հայ ժողովրդի կազմավորումը, տեքստ,
   - Հայկյանների պետության առաջացումը և հայ ժողովրդի կազմավորումը (ըստ Մովսես Խորենացու),
   - Վանի թագավորությունը (մ.թ.ա. IX-VII դդ.),
   - Հայաստանը և Աքեմենյան Պարսկաստանը,
   - Հայաստանը (մ.թ.ա. VI-IV դդ.): Հայկական թագավորությունները (մ.թ.ա. IV-III դդ.),
   - Հայաստանը (մ.թ.ա. II դ.): Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորությունը,
   - Տիգրան Բ Մեծի տերությունը, տեքստ,
   - Տիգրան Բ Մեծի տերությունը (մ.թ.ա. 95-69 թթ. կացությամբ),
   - Հայ-հռոմեական պատերազմները (մ.թ.ա. 69-66 թթ.), հռոմեական զորավարներ Լուկուլլոսի և Պոմպեոսի արշավանքները Հայաստան,
   - Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը (I-III դդ.),
   - Հայաստանը ըստ Ստրաբոնի, Պլինիոս Ավագի և Կլավդիոս Պտղոմեոսի,
   - Մեծ Հայքի թագավորությունը (298-387 թթ.): Քրիստոնեության հռչակումը պետական կրոն (301 թ.),
   - Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի,
   - Հայաստանը (387-428 թթ.): Մեսրոպ Մաշտոցի գործունեությունը և հայ գրերի գյուտը,
   - Հայաստանն անկախության վերականգնման ճանապարհին, տեքստ,
   - V դ. ազատագրական պատերազմները՝ Վարդանանց (450-451 թթ.) և Վահանանց (482-484 թթ.),
   - Հայաստանն ուշ մարզպանության շրջանում (527-640 թթ.),
   - Հայաստանը զարգացած ավատատիրության շրջանում, տեքստ,
   - Հայ Բագրատունիների տերությունը (885-908 թթ.),
   - Հայ Բագրատունիների թագավորությունը (908-1020 թթ.), Անիի թագավորության թուլացումը և անկումը (1020-1045 թթ.),
   - Կիլիկիայի Հայկական պետությունը (1080-1375 թթ.), տեքստ,
   - Կիլիկիայի Հայկական պետություն (1080-1375 թթ.), Կիլիկիայի Հայկական իշխանությունը (1080-1137 թթ.), Կիլիկիայի Հայկական պետությունը (1266-1375 թթ.),
   - Կիլիկիայի Հայկական պետությունը (1145-1266 թթ., 1198 թ-ից՝ թագավորություն),
   - Լենքթեմուրի արշավանքները Հայաստան: Հայկական Կարակոյունլուների և Աղկոյունլուների պետությունների համակարգում,
   - Հայ ազգային-ազատագրական շարժումները (XVI-XVIII դդ.), տեքստ,
   - Հայ ազգային-ազատագրական շարժումները (XVI-XVII դդ.),
   - Իսրայել Օրու ազատագրական գործունեությունը,
   - Հայ ազգային-ազատագրական շարժումը XVIII դդ. առաջին երեսնամյակում,
   - Խամսայի մելիքությունների միությունը,

- Հայաստանը XVIII դ. երկրորդ կեսին,
- Հովսեփ Էմինի ազատագրական գործունեությունը,
- Հայկական պետության սահմանների նախագիծն ըստ «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ»-ի և «Որոգայթ փառաց»-ի,
- Արևելյան Հայաստանի միացումը Ռուսական կայսրությանը, տեքստ,
- Արևելյան Հայաստանի միացումը Ռուսական կայսրությանը (1801-1829 թթ.),
- Մարտական ուղղությունները Անդրկովկասում 1804-1813 թթ. ռուս-պարսկական և 1806-1812 թթ. ռուս-թուրքական պատերազմների շրջանում,
- Մարտական ուղղությունները Անդրկովկասում 1826-1828 թթ. ռուս-պարսկական և 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմների շրջանում,
- Հայկական մարզ (21. III. 1828 թ.- 10.IV.1840 թ.),
- Ղրիմի պատերազմի (1853-1856 թթ.) Կովկասյան ճակատը և ռազմական գործողությունները սևծովյան ավազանի հարավային շրջանում,
- Հայ ազգային ազատագրական շարժումը XIX դ.-XXդ. սկզբին, տեքստ,
- 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի կովկասյան ռազմաճակատը,
- Հայաստանը 1877-1914 թթ.,
- Արևելյան Հայաստանը XX դ. սկզբին (1901-1914 թթ.),
- Արևելահայության հակացարական ելույթները XX դ. սկզբին: Հեղափոխական շարժումներն Արևելյան Հայաստանում (1905-1907 թթ.),
- Ադանայի և Կիլիկիայի հայության կոտորածները 1909 թ.,
- Ճանապարհները և երկաթուղային շինարարությունն Արևելյան Հայաստանում ու Անդրկովկասում (XIX դ. երկրորդ կեսին – XX դ սկզբին),
- Հայկական հարցը (1878-1914 թթ.),
- Առաջին աշխարհամարտի Կովկասյան ռազմաճակատը (1914-1917 թթ.),
- Հայկական Մեծ եղեռնը (1915-1916 թթ.),
- Օսմանյան կայսրության բաժանման ծրագիրն ըստ Սայքս-Պիկոյի համաձայնագրի (1916 թ.),
- Հայաստանը (1918 թ., հունվար-մայիս),
- «Լոռու չեզոք գոտին» (1919-1921 թթ.),
- Չհայտարարված պատերազմ հայ-ադրբեջանական սահմանագլխին (1918-1920 թթ.),
- Հայաստանի Հանրապետությունը (1919 թ., հունվար-հունիս),
- Արևելյան Հայաստանի տարածքը և սահմաններն ըստ Հայաստանի կառավարության կողմից Փարիզի խաղաղության կոնֆերանս ներկայացված նախագծի,
- Հայ-թուրքական սահմանագիծն ըստ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի՝ համաձայն Սևրի պայմանագրի (10.VIII.1920 թ.),
- Հայաստանի Հանրապետության սահմանների խնդիրը ՀՀ և ՌԽՖՍՀ միջև կնքված պայմանագրերում,
- Հայաստանի Հանրապետությունը (1919-1920 թթ.),
- 1920 թ. Մայիսյան խռովությունը,
- Թուրք-հայկական պատերազմը (28.IX.-18.XI. 1920 թ.),
- Հայաստանի Հանրապետությունն ըստ Ալեքսանդրապոլի պայմանագրի (2.XII.1920 թ.),
- Հայաստանի խորհրդայնացումը (XII.1920 թ. – VII. 1921 թ.),
- Հայաստանի ԽՍՀ սահմանների խնդիրը (1920-1921 թթ.),
- 1921 թ. Փետրվարյան ապստամբությունը Հայաստանում,
- «Ռազմական կոմունիզմի» իրականացումը Հայաստանում (8.XII.1920-IV.1921 թ.),
- «Նոր տնտեսական քաղաքականության» իրականացումը Հայաստանում (1921 թ. ապրիլ, մայիս, 1928 թ.),

- Քրիստոնեության տարածումը Հայաստանում,
- Քրիստոնեության պետական կրոն հռչակումը (301 թ.),
- Հայաստանյայց առաքելական եկեղեցու թեմական բաժանումը IV դ. սկզբին,
- Հայոց եկեղեցին և հայ հոգևորականությունը Մեծ եղեռնի շրջանում,
- Հայկական բարբառների հնչյունաբանության և ձևաբանական դասակարգման քարտեզ (1915 թ. դրությամբ),
- Հայոց պատմության համառոտ ժամանակագրություն:

3. *Հարությունյան Բ.,* Երանշահրի (Սասանյան Պարսկաստանի) Քուստի Կապկոհի վարչական բաժանումը ըստ «Աշխարհացոյցի»-ի, The administrative division of Kusti-Kapkoh region of Sassanid Persia (Eransahr) according to the “Ashkharhatsoyts” (Armenian Geography), Procecdings of The First International Armenolgy and Iranology Conference, 10-11 November 2008, Department of Armenian language and literature University of Isfahan, Edited by: Mohammad Malek Mohammadi (Ph. D), Isfahan, Iran, 2008, էջ 59-66:
4. 2009 թ. վերահրատարակվել են ներքոհիշյալ աշխատանքները.
   - *Հարությունյան Բ.,* քարտեզագիր՝ Վ. Մխիթարյան, «Հայաստանի պատմության ատլաս», Բ մաս, Երևան, 2008, 104 էջ,
   - *Հարությունյան Բ.,* Le plateau Armenien , Histoire du people armenien, քարտեզ, Թուլուզ, 2007,
   - *Հարությունյան Բ.,* L’Armenie au II-em siecele av.z-c, Histoire du people armenien, քարտեզ, Թուլուզ, 2007,
   - *Հարությունյան Բ.,* L’empire de Tigran le Grand, Histoire du people armenien, քարտեզ, Թուլուզ, 2007,
   - *Հարությունյան Բ.,* L’Armenie de 298 a` 387, Histoire du people armenien, քարտեզ, Թուլուզ, 2007,
   - *Հարությունյան Բ.,* La revolte de Vardan Mamikonian /450-451/, քարտեզ, Թուլուզ, 2007,
   - *Հարությունյան Բ.,* L’Armenie de 591 a` 640, քարտեզ, Թուլուզ, 2007,
   - *Հարությունյան Բ.,* L’Armenie de 640 a` 849, քարտեզ, Թուլուզ, 2007,
   - *Հարությունյան Բ.,* Reyaume des bagratides aux IX-XI-em, քարտեզ, Թուլուզ, 2007,
   - *Հարությունյան Բ.,* Etat armenien de Cilicle /1073-1375/, քարտեզ, Թուլուզ, 2007,
   - *Հարությունյան Բ.,* L’Armenie et les pays voisins a` la fin du XII-em et au debut du XIII-em siecle, քարտեզ, Թուլուզ, 2007,
   - *Հարությունյան Բ.,* Republiqe d’Armenie et republiqe du Haut- Karabagh /Artsakh/, քարտեզ, Թուլուզ, 2007,
   - *Հարությունյան Բ.,* «Հայկական լեռնաշխարհ (ֆիզիկական քարտեզ Մ. 1:1 000 000)», Երևան, 2008:
5. *Բաղալյան Գ.,* Հայաստանի Ազգային ատլաս», Բ մաս, Երևան, 2008:
   - Թոնդրակյան շարժումը Հայաստանում (X-XI դդ.),
   - Հայաստանը XVI դ.: Պարսկա-օսմանյան պատերազմները,
   - Հայաստանը XVII դ. առաջին կեսին,
   - Հայերի բռնագաղթը Շահ-Աբաս I-ի կողմից Պարսկաստանում XVII դ. սկզբին,
   - Հայաստանը (XVII դ. երկրորդ և XVIII դ. առաջին կեսին),
   - Էրզրումի (Կարին) և Վանի էյալեթները (նահանգներ) XVII-XVIII դդ.,
   - Երևանի և Նախիջևանի խանությունները XVIII դ. երկրորդ կեսին,
   - Հայաստանը (XVIII դ.-XIX դ. սահմանագլխին),
   - Պարսկահայերի և արևմտահայերի վերաբնակեցումն Արևելյան Հայաստանի ռուսական տիրույթներում (1828-1830 թթ.),
   - Հայաստանը (1801-1840 թթ.),
   - Զեյթունի 1862 թ. ապստամբությունը,
   - Սասունի 1894 թ. ապստամբությունը,
   - Սասունի 1904 թ. ապստամբությունը,

- Արևմտահայության կոտորածները XIX դ. 90-ական թթ.,
- Սասուն-Տարոնը և Բզնունիքը (XIX դ. վերջին և XX դ. սկզբին),
- Վան-Վասպուրականը (XIX դ. վերջին և XX դ. սկզբին),
- Հայ-թաթարական ընդհարումներն Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում (1905-1906 թթ.),
- Առաջին համաշխարհային պատերազմը (աշխարհամարտ) և հայ ժողովուրդը (տեքստ),
- Արևմտահայության վերադարձը և երկրի վերաշինումը (1917 թ.),
- Հայաստանյայց առաքելական եկեղեցու վիճակները (թեմերը) XIX դ. վերջին-XX դ. սկզբին,
- Հայաստանյայց առաքելական եկեղեցու թեմերը և հայրապետական պատվիրակությունները (2008 թ.),
- Հայ կաթողիկե եկեղեցու թեմերը և միաբանությունները,
- Հայ ավետարանական եկեղեցիները,
- Հայ գրչության կենտրոնները,
- Հայ մշակույթը (XV-XVII դդ.),
- Հայկական առաջին գաղթավայրերի առաջացումը (IV-XIII դդ.),
- Հայերի տարածումը Կապադովկիայում (Գամիրք), Ասորիքում և Կիլիկիայում (XI դ. կես-XII դ. սկզբին),
- Հայկական գաղթավայրերն Արևմտյան Եվրոպայում (միջին դարեր-1914 թ.),
- Հայկական գաղթավայրերը Հարավարևելյան Եվրոպայում (միջին դարեր-1914 թ.),
- Հայկական գաղթավայրերը Վրաստանում (մինչև 1914 թ.),
- Հայկական գաղթավայրերը Լեհաստանում, Ուկրաինայում, Մոլդովայում և Ղրիմում (XIV դ.- XX դ. սկզբին),
- Հայկական գաղթավայրերը Ռուսաստանում (XVIII դ.-XX դ. սկղբին), Պարսկաստանում (XVII դ.-XXդ. սկզբին) և Հարավարևելյան Ասիայում (XVIII դ.-XX դ. սկզբին),
- Փոքր Ասիայի, Արևելյան Թրակիայի և Պոնտոսի հայկական գաղթավայրերը (մինչև 1915 թ.),
- Սփյուռքի ձևավորումը Առաջին աշխարհամարտից հետո,
- Հայկական Սփյուռքը Հյուսիսային և Հարավային Ամերիկայում,
- Հայկական Սփյուռքը Հյուսիսային, Կենտրոնական Եվրոպայում և Բալկաններում,
- Հայկական Սփյուռքը Հարավարևմտյան Եվրոպայի երկրներում (Ֆրանսիայում և Իտալիայում),
- Հայկական Սփյուռքը Արևելյան Եվրոպայում,
- Հայերը Թուրքիայում,
- Հայերը Ռուսաստանի Դաշնությունում,
- Հայկական Սփյուռքը Մերձավոր և Միջին Արևելքում,
- Հայերը Վրաստանի Հանրապետությունում,
- Հայերը Ադրբեջանի Հանրապետությունում 1918-1991 թթ. (1920-1991 թթ. ԱխՍՀ),
- Հայերը Ղազախստանում և Միջին Ասիայում, Հայերը Ավստրալիայում և Նոր Զելանդիայում:

6. *Հովսեփյան Յու.,* «Հայաստանի Ազգային ատլաս», Բ մաս, Երևան, 2008:
   - Հայաստանի Հանրապետությունը (1918-1920 թթ.), տեքստ,
   - Խորհրդային Հայաստան (1920-1991 թթ.), տեքստ,
   - Հայաստանի խորհրդայնացումը (XII.1920 թ.-VII.1921 թ.),
   - «Ռազմական կոմունիզմի» քաղաքականության իրականացումը Հայաստանում (8. XII.1920-IV.1921 թթ.),
   - «Նոր տնտեսական քաղաքականության» իրականացումը Հայաստանում (1921 թ. ապրիլ, մայիս, 1928 թ.):
7. *Hajruni A.,* Die Armenische Frage in der Deutschen Aussenpolitik vom Maerz bis Juni 1918, Teil II, “Armenisch-Deutsche Korrespondenz”, Heft I, Berlin, 2008, S. 23-30.
8. *Hajruni A.,* Die Deutsche Orient-Mission, “Armenisch-Deutsche Korrespondenz”, Heft II, Berlin, 2008, S. 23-29.
9. *Hajruni A.,* Wer sind die Armeniern?, “Armeniern, Landeskunde”, Jerewan, 2008, S. 24-26.

10. *Hajruni A.,* Der Genozid an den Armeniern in der Turkei, “Armeniern, Landeskunde”, Jerewan, 2008, S. 34-42
11. *Hajruni A.,* Berg-Karabach, “Armeniern, Landeskunde”, Jerewan, 2008, S. 153-157.
12. *Hajruni A.,* Berg-Karabach, “Armeniern, Landeskunde”, Jerewan, 2008, S. 153-157.
13. *Հարությունյան Ռ.,* Հայ եկեղեցու թեմական բաժանումը մարզպանական Հայաստանում, «Բանբեր Երևանի համալսարանի», ԲԵՀ, թիվ 2, Երևան, 2008, 7 էջ:
14. *Հարությունյան Ռ.,* «Նախարարությունները մարզպանական Հայաստանում», ԲԵՀ, թիվ 1, Երևան, 2009, 86-92 էջ:
15. *Մխիթարյան Վ., Հովսեփյան Ա.,* «Աշխարհի քաղաքական քարտեզ», Մ. 1: 30 000 000, Երևան, 2008:
16. *Մխիթարյան Վ., Հովսեփյան Ա.,* «ՀՀ և ԼՂՀ վարչական քարտեզ», Մ. 1: 400 000, Երևան, 2008:
17. *Մխիթարյան Վ., Հովսեփյան Ա.,* «ՀՀ և ԼՂՀ ֆիզիկական քարտեզ», Մ. 1: 400 000, Երևան, 2008:
18. *Հարությունյան Բ.,* քարտեզագիր՝ Վ. Մխիթարյան, «Հայկական լեռնաշխարհ (ֆիզիկական քարտեզ Մ. 1:1 000 000)», Երևան, 2008:
19. *Հարությունյան Բ.,* քարտեզագիր՝ Վ. Մխիթարյան, «Հայաստանի պատմության ատլաս», Բ մաս, 104 էջ, Երևան, 2008:
20. *Մխիթարյան Վ., Հովսեփյան Ա.,* «Աշխարհագրական ատլաս 6, Աշխարհագրական քաղանք, մայրցամաքներ և օվկիանոսներ», 40 էջ, Երևան, 2008:
21. *Մխիթարյան Վ., Հովսեփյան Ա.,* Ուրվագծային քարտեզներ, «Աշխարհագրական ատլաս 6, Աշխարհագրական քաղանք, մայրցամաքներ և օվկիանոսներ», 16 էջ, Երևան, 2008:
22. *Մխիթարյան Վ.,* «Հասարակական աշխարհագրություն, տարածաշրջաններ և պետություններ» 8, «Ռուսաստանի Դաշնություն», քարտեզ, Երևան, 2008:
23. *Մխիթարյան Վ.,* Աշխարհագրություն «Հայաստան» 9, քարտեզներ, Երևան, 2009:
    - Հայկական լեռնաշխարհի մեզոդիրքը,
    - Հայկական լեռնաշխարհի լեռնագրությունը,
    - Հայկական լեռնաշխարհի վերընթաց լանդշաֆտային գոտիները,
    - ՀՀ վարչատարածքային բաժանումը,
    - ՀՀ երկրաբանական քարտեզ,
    - ՀՀ օգտակար հանածոներ,
    - ՀՀ լեռնագրությունը,
    - ՀՀ կլիմայի տիպերը,
    - ՀՀ ջրագրությունը,
    - ՀՀ հողային ծածկույթը,
    - ՀՀ լանդշաֆտային գոտիները,
    - ՀՀ ֆիզիկաաշխարհագրական շրջանացման սխեմա,
    - ՀՀ բնակչության թվաքանակի շարժընթացը (մլն մարդ), սխեմա,
    - Բնակչության ծնելիությունը, մահացությունը և բնական աճը (Ընդհանուր գործակիցներ 1000 մարդու հաշվով), սխեմա,
    - Բնակչության ներգաղթի գլխավոր ալիքները և ուղիները, սխեմա,
    - Բնակչության խտությունը ըստ վերընթաց գոտիների,
    - Քաղաքները,
    - Արդյունաբերության տեղաբաշխումը,
    - Էլեկտրաէներգետիկա,
    - Գյուղատնտեսություն,
    - Գյուղատնտեսության ոռոգման համակարգը,
    - Տրանսպորտ,
    - Արագածոտնի մարզ,

- Արարատի մարզ,
- Արմավիրի մարզ,
- Գեղարքունիքի մարզ,
- Լոռու մարզ,
- Կոտայքի մարզ,
- Շիրակի մարզ,
- Սյունիքի մարզ,
- Վայոց ձորի մարզ,
- Տավուշի մարզ,
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

24. *Մխիթարյան Վ.*, «Ես և շրջակա աշխարհը» 4, քարտեզներ, Երևան, 2009:
    - Նեխո II փարավոնի շուրջաֆրիկյան ճանապարհորդությունը,
    - Մարկո Պոլոյի ճանապարհորդությունը,
    - Ա. Նիկիտինի ճանապարհորդությունը,
    - Վասկո դա Գամայի ճանապարհորդությունը,
    - Կոլումբոսի ճանապարհորդությունը,
    - Ջ. Կուկի ճանապարհորդությունը,
    - Ռ. Սքոթի և Ռ. Ամունդսենի արշավախմբերի երթուղին:
25. 2009 թ. վերահրատարակվել են ներքոհիշյալ աշխատանքները.
    - Բ. Հարությունյան, քարտեզագիր՝ Վ. Մխիթարյան, «Հայաստանի պատմության ատլաս», Բ մաս, Երևան, 2008, 104 էջ:
    - Բ. Հարությունյան, քարտեզագիր՝ Վ. Մխիթարյան, «Հայկական լեռնաշխար (ֆիզիկական քարտեզ Մ. 1:1 000 000)», Երևան, 2008:
    - Վ. Մխիթարյան, Ա. Հովսեփյան, «Աշխարհի քաղաքական քարտեզ», Մ. 1: 30 000 000, Երևան, 2008:
    - Վ. Մխիթարյան, Ա. Հովսեփյան, «ՀՀ և ԼՂՀ վարչական քարտեզ», Մ. 1: 400 000, Երևան, 2008:
    - Վ. Մխիթարյան, Ա. Հովսեփյան, «ՀՀ և ԼՂՀ ֆիզիկական քարտեզ», Մ. 1: 400 000, Երևան, 2008: